ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 26.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/48

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 11.12.2017թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/48 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 11.12.2017թ. բողոքով հայտնել է հետևյալը.

Ընկերությունը սույն թվականի հոկտեմբերի 20-ին՝ հրավերով նախատեսված ժամկետում և կարգով, թղթային եղանակով «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին է ներկայացրել իր հայտը: Հրավերի 1-ին (միակ) չափաբաժնով

նախատեսվել է Պատվիրատուի կարիքների համար ձեռք բերել էլեկտրոնային գրատախտակներ:

Սույն թվականի հոկտեմբերի 25-ին ժամը 17:49-ին «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Հայկ Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է նախապես պաշտոնապես պահանջված 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հանձնաժողովին ներկայացված հրավերի N 6 հավելվածը և դրան կցվող՝ առաջարկվող ապրանքների անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր) պարունակող N 6.1 հավելվածը:

Ուշադիր ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն սույն թվականի հոկտեմբերի 26-ին ժամը 18:46-ին hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեներով, պաշտոնապես տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ.Ղազարյանին և Պատվիրատուին մասնակցի կողմից ներկայացված N 6.1 հավելվածում առկա բազմաթիվ կոպիտ սխալների և անհամապատասխանությունների մասին՝ հատ-հատ թվարկելով և մատնանշելով դրանք և խնդրել է հանձնաժողովին տրամադրել 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված՝ հրավերի N 6 հավելվածին կցվող N 6.1 հավելվածի արդեն իսկ շտկած փաստաթղթերի ամբողջական սկանավորված պատճենները:

Սույն թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 15:25-ին հանձնաժողովի քարտուղար Հ.Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստացել է պահանջված փաստաթղթերի արդեն իսկ «շտկված» պատճենն, այս անգամ արդեն ստորագրման ամսաթվերը նշված 30.10.2017թ.:

Մասնակցի կողմից 30.10.2017թ. ներկայացված փաստաթղթերի այսպես կոչված «շտկված» տարբերակը, ինչպես և նախորդը, նույնպես պարունակում էր բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

Նույն օրը՝ սույն թվականի հոկտեմբերի 31-ին ժամը 17:23-ին, ընդամենը 2 (երկու) ժամ անց, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեներով պաշտոնապես տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին այն մասին, որ «Փաստաթղթերի նախնական

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի նախորդ տարբերակը, ներկա փաստաթղթերը նույնպես պարունակում են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, որ մանրամասն տեղեկություններն այդ մասին, պաշտոնական ապացույցների հետ մեկտեղ, նույնպես պաշտոնապես կներկայացվեն հանձնաժողովի ուշադրությանն առաջիկա մեկ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հաջորդ օրը՝ սույն թվականի նոյեմբերի 01-ին ժամը 12:59-ին, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստերի հասցեներով պաշտոնապես կրկին տեղեկացրել է հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված N 6.1 հավելվածի՝ «շտկած» տարբերակում այս անգամ էլ առկա են բազմաթիվ կոպիտ սխալներ և անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, թվարկելով և մանրամասն բացատրելով այդ սխալներն ու անհամապատասխանությունները 3 (երեք) էջից բաղկացած նամակում:

Սակայն նույն օրը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի վերը նշված էլեկտրոնային նամակը ստանալուց հետո ընդամենը 3 ժամ 12 րոպե անց, www.gnumner.am կայքում 2017-11-01 16:11:06 հրապարակվել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որը նույնիսկ ոչ մի ամսաթիվ և համար չի պարունակում:

Ելնելով վերոհիշյալից, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ստիպված է եղել 06 նոյեմբերի 2017թ. N 1/10-11/06-02 բողոքը ներկայացնել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, խնդրելով «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած՝ «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու և նրա հետ պայմանագիր կնքելու որոշումները ճանաչել անվավեր:

27.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/45 որոշմամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը բավարարվել է, իսկ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի վերոհիշյալ որոշումները դադարեցվել են:

«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.12.2017թ. թիվ 1 որոշմամբ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

05.12.2017թ. ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջի համաձայն՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեներով PDF ձևաչափով ներկայացրել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիրը)՝ բնօրինակից, ինչպես նաև հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ մեկ պայմանագիր՝ 9 499 980 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Սակայն 06.12.2017թ.՝ այն էլ աշխատանքային ժամի ավարտից հետո (18:32), «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ստացել է նամակ առ այն, որ՝

«Ձեր կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում առկա են անհամապատասխանություններ հրավերով սահմանված պահանջների նկատմամբ, մասնավորապես.

- Հրավերով պահանջվել է էլեկտրոնային գրատախտակ, որը բաղկացած է երեք բաղադրիչներից.

1) էլեկտրոնային գրատախտակ (առանձին՝ այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ)-1հատ.

2) Պրոյեկտորի կախիչ (առաստաղին և պատին ամրացնելու, հնարավորությամբ) - 1 հատ.

3) Պրոյեկտոր (ոչ պակաս 3200 լյումենս), որը հնարավոր կլինի օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս (օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար) - 1 հատ:

Ձեր կողմից ներկայացված նկարագիրը բաղկացած է 3 կետից.

ա) Թվային պրոյեկտոր NEC UM351Wi / Digital Projector NEC UM351Wi - 1 հատ (կախիչը ներառված),

բ) Գրատախտակ- 1 հատ

գ) Ուսուցման ինտերակտիվ համակարգի տեղադրման համար անհրաժեշտ մալուխներ՝ Equip USB 2.0 ակտիվ երկարացման մալուխ 5մ - 1 հատ, Equip HDMI միացման մալուխ M./M., 10մ-1 հատ:

Հրավերով պահանջվող կախիչի մասով տվյալներ առկա չեն և նշված չէ՝ այդ կախիչը նախատեսված է առաստաղին և պատին ամրացնելու համար, թե՝ ոչ:

Հրավերով պահանջվել է էլեկտրոնային գրատախտակ, այլ ոչ թե գրատախտակ:

Ինչպես նաև խնդրում եմ նշել, արդյոք հնարավոր է պրոյեկտորը օգտագործել համակարգից դուրս, օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար, թե ոչ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Ձեզ առաջարկվում է սույն ծանուցումը ստանալու օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները և շտկված տարբերակը ուղարկել hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:»

Ուշադիր ուսումնասիրելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված հարցադրումը, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն՝ իրեն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 66-րդ կետով, այն է՝ «...Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր...» վերապահված իրավունքի համաձայն՝ իր կողմից արդեն իսկ ներկայացված N 6.1 հավելվածը շտկելու հարկ չգտնելով սույն թվականի դեկտեմբերի 07-ին, ժամը 14:19-ին hayk_khazaryan@mail.ru և 181dproc@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեներով ներկայացրել է հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանին և Պատվիրատուին որպես լրացուցիչ տեղեկություն պաշտոնական

նամակ՝ մանրամասն թվարկելով, մատնանշելով, բացատրություններ ու պարզաբանումներ տալով հանձնաժողովի կողմից կատարված հարցադրմանը:

Նշված նամակում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ներկայացրել է ավելի քան մանրամասն պարզաբանումներ, որտեղ պարզ և ակնհայտ ապացուցել է, որ հանձնաժողովի կողմից բերված փաստարկները տեխնիկական առումով լիովին առոչինչ են, ավելի քան անբացատրելի և անիմաստ, թեկուզ մեկ բնորոշիչ հատկության բացակայության պատճառով չեն կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևիցե կերպ դասակարգվել:

Վերոհիշյալ պաշտոնական նամակում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն որպես տարածաշրջանում (Հայաստան և Վրաստան) պրոֆեսիոնալ AV-համակարգերի և սարքավորումների ոլորտում միակ մասնագիտացված կազմակերպություն և նույնպես տարածաշրջանում միակ կազմակերպությունը, որը միայն ՀՀ կրթական համակարգում տեղադրել է 700 ինտերակտիվ լսարաններից ավել, հերթական անգամ գրավոր (սկսած հանձնաժողովին սույն թվականի հոկտեմբերի 25-ին ուղարկած էլեկտրոնային նամակից) ստիպված փաստել է, որ հրավերի տեխնիկական բնութագրերի ակնհայտ անփույթ (բացակայում է նույնիսկ պահանջը սարքավորումների հետ մեկտեղ մատակարարել այդ սարքավորումների համակցված աշխատելու համար անհրաժեշտ մալուխները) պատրաստման պատճառով հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված N 1-ում տեղ են գտել տեխնիկական առումով լիովին առոչինչ, անիմաստ, որևիցե կերպ չդասակարգվող և չգնահատվող և միգուցե գեղարվեստական գրականությանն ավելի վայել արտահայտություններ և պահանջներ և հատուկ բևեռել է հանձնաժողովի ուշադրությունն հետևյալ փաստերին՝

1) «էլեկտրոնային գրատախտակ (առանձին՝ այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ)»՝ տեխնիկական առումով «այլ պրոյեկտոր» արտահայտությունը ավելի քան անբացատրելի է և անիմաստ. որևիցե քանակական (լուսային հոսք, լամպի կյանք և այլն) կամ որակական (կետայնություն, կոնտրաստ և այլն) բնորոշիչ հատկության բացակայության պատճառով այն չի կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևիցե կերպ դասակարգվել:

Պահանջել «այլ պրոյեկտոր» դա նույնն է, ինչ պահանջել «այլ ավտոմեքենա», «այլ հեռուստացույց» և այլն:

2) «էլեկտրոնային գրատախտակ» կամ «ինտերակտիվ գրատախտակ» միջազգայնորեն ընդունված հասկացությունը ներկայացնում է իրենից թվային պրոյեկտորից և գրատախտակից բաղկացած և անբաժանելի համակցված համակարգ և ոչ թե գրատախտակի որևիցե տեխնիկական հատկանիշ:

Այս համակարգի մակերեսի վրա երկու նշված սարքերի համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվում է միասնական ինտերակտիվ դաշտ, որի հետ կարելի է աշխատել մատով (մատերով) հպման և/կամ էլեկտրոնային գրիչների միջոցով:

Ի դեպ, ցանկացած էլեկտրոնային կամ ինտերակտիվ գրատախտակ՝

- տեղեկատվության արտացոլման առումով նշված համակցված համակարգի կազմում հանդիսանում է լիովին պասիվ բաղադրիչ.

- պարզապես չի կարող աշխատել առանց թվային պրոյեկտորի, և ցանկացած թվային պրոյեկտոր (բնականաբար՝ կախված լուսային հոսքից) կարող է օգտագործվել գրատախտակի հետ այս համակցված համակարգում աշխատելու համար:

Էլեկտրոնային կամ ինտերակտիվ գրատախտակները կարող են դասակարգվել միասնական ինտերակտիվ դաշտում հպման կոորդինատները ախտորոշելու եղանակով որպես ակտիվ (հպման կոորդինատները ախտորոշվում են գրատախտով, գրատախտակի ինտերակտիվ դաշտի չափսերը այս դեպքում՝ անփոփոխ են) կամ պասիվ (հպման կոորդինատները ախտորոշվում են արտաքին սարքով՝ պրոյեկտորով և այլն, գրատախտակի ինտերակտիվ դաշտի չափսերը ելնելով Պատվիրատուի պահանջներից կարող են մինչև 2 անգամ փոփոխվել):

Որևիցե պահանջ նշված առումով հրավերի պայմանագրի Հավելված №1-ի՝ «Տեխնիկական բնութագիր» փաստաթղթում ի սպառ բացակայում է:

3) Գնահատող հանձնաժողովը պարզապես աչքաթող է արել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից 05.12.2017թ. հանձնաժողովին ներկայացված 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի՝ NEC UM351Wi թվային պրոյեկտորի տեխնիկական բնութագրերում (հրավերի N 6.1 հավելված) սևով սպիտակի վրա նշված տվյալները՝ «Պատի կախոցը ներառված է / Wall Mount included»:

Տվյալ կախոցը հատուկ նախագծված է արտադրողի՝ NEC Display Solutions (Ճապոնիա) ընկերության կողմից հենց NEC UM3xxWi սերիայի թվային պրոյեկտորների

հետ աշխատելու համար և ի տարբերություն դրա՝ առաստաղային կախոցը թույլ է տալիս զգալի պակասեցնել ստվերը ինտերակտիվ համակարգերում օգտագործվելու դեպքում:

Ընկերությունը նշել է նաև, որ համաձայն տարրական ֆիզիկայի օրենքների առաստաղային կախոցի վրա ազդում է ուղղահայաց ուժ, իսկ պատի կախոցի վրա՝ պտտվող մոմենտն, ինչի պատճառով այդ երկու կախոցները լրիվ տարբեր կոնստուկտիվ լուծումներ են պահանջում, և տնտեսական տեսանկյունից համատեղել այդ երկու տարբեր լուծումները մի սարքավորման մեջ՝ անկասկած աննպատակահարմար է:

Բացի այդ, որևիցե լուրջ կազմակերպություն չի արտադրում պրոյեկտորի կախոց նախատեսված միաժամանակ և առաստաղին և պատին ամրացնելու համար:

Փաստ է նաև այն, որ գնահատող հանձնաժողովն առանց որևիցե առարկության և մեծ սիրով ընդունել էր «Իայսիտելեկոմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկված PL PJ-1400 W պրոյեկտորի հենց առաստաղային կախոցը (http://www.printlux.by/catalog/Kronshteyn-dlya-proektora-PL-PJ-1400W-beliy-23073.html)՝ նույնիսկ չվերհիշելով իր պահանջը՝ «կախիչը օգտագործել պրոյեկտորը միաժամանակ և առաստաղին և պատին ամրացնելու համար»:

Ավելի քան անհասկանալի, զարմանալի և ապշեցուցիչ ընտրողականության դրսևորում գնահատող հանձնաժողովի կողմից երկու մասնակիցների միջև:

4) «Պրոյեկտոր (ոչ պակաս 3200 լյումենս), որը հնարավոր կլինի օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս (օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար»:

Կրկին արտահայտություն, որը տեխնիկական առումով լիովին առոչինչ է, ավելի քան անբացատրելի և անիմաստ է, որը թեկուզ մեկ քանակական կամ որակական բնորոշիչ հատկության բացակայության պատճառով չի կարող ո՛չ գնահատվել, ո՛չ էլ որևիցե կերպ դասակարգվել:

Արդյո՞ք գնահատող հանձնաժողովի համար պարզ չէ, որ ցանկացած թվային պրոյեկտոր ներկայացնում է իրենից հենց առանձին սարքավորում, որը, կախված նրա լուսային հոսքից, կետայնությունից, պրոյեկցիոն էկրանի ընդհանուր մակերեսի չափերից և արտաքին միջավայրի լուսավորության պայմաններից, հնարավոր է օգտագործել ցանկացած սենյակում, դահլիճում և նույնիսկ դրսում:

Հարկ է շեշտել նաև, որ նույն Հ. Ղազարյանը հանդիսանում է միևնույն ժամանակ նաև «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար և նրան քաջ հայտնի է, որ տվյալ գնման ընթացակարգի արդյունքում «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշում է ընդունվել նույն Պատվիրատուի դահլիճում անցկացվող միջոցառումների համար պրոյեկտորի ձեռքբերման վերաբերյալ:

Այս առումով որևիցե բացատրություն, թե գրատախտակների հետ մատակարարման ենթակա պրոյեկտորների «դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ» օգտագործման հարցն ինչ նպատակով է հանձնաժողովի կողմից ներկայումս հնչեցվել, Ընկերությունը պարզապես չի գտնում:

5) Անդրադառնալով սույն ընթացակարգի սկզբին Ընկերությունը նշել է, որ հրավերի հրապարակումից անմիջապես հետո, «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացուցիչները հեռախոսազրույցներ էն ունեցել գնահատող հանձնաժողովի քարտուղարի և Պատվիրատուի ղեկավարի հետ, տեղեկացնելով նրանց, որ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի պայմանագրի Հավելված №1-ում առկա տեխնիկական բնութագրերն ակնհայտ անփույթ են պատրաստված և կարիք ունեն շտկվելու:

Ցավոք սրտի գնահատող հանձնաժողովը կտրականապես հրաժարվել է վերանայել ու շտկել ակնհայտ անգրագետ պատրաստված տեխնիկական բնութագրերը, ինչն Ընկերության խորին համոզմամբ բազմաթիվ խնդիրներ է ստեղծել ընթացակարգի ընթացքում թե Պատվիրատուի, թե մասնակիցների համար:

Ընկերությունը գտնում է, որ ներկա հրավերի տեխնիկական բնութագրերի ակնհայտ անփութությունը բխում է այն բանից, որ գնահատող հանձնաժողովը պարզապես չի կատարել որևիցե նախապատրաստական աշխատանք և գրեթե մեկին մեկ արտատպել է նույն Պատվիրատուի կողմից 2016թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին անցկացված «181ԴՊ-ՇՀԱՊՁԲ-16/1» և «181ԴՊ-ՇՀԱՊՁԲ-16/2» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի տեխնիկական բնութագրերն (ներկայացվել է սույն բողոքին կից), որոնց վերաբերյալ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն պաշտոնապես ներկայացրել էր համապատասխան պարզաբանման հարցումներ՝

ներառյալ վերոհիշյալ բացատրություններն, և այդպես էլ չէր ստացել որևիցե իմաստալից բացատրություն: Ի դեպ երկու նշված դեպքում էլ՝

- «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովների կողմից ճանաչվել էր ընտրված մասնակից, և նրա հետ կնքվել էին համապատասխան պայմանագրեր,

- «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն մատակարարել և տեղադրել է նույն Պատվիրատուի մոտ նույն վերոհիշյալ NEC UM3xxWi սերիայի թվային պրոյեկտորներից (3 x UM301Wi + 1 x UM352Wi), նրանց կազմի մեջ ներառած նույն պատի կախոցներից և նույն գրատախտակներից բաղկացած համակարգեր, որոնք առաջարկված են նաև «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի շրջանակներում.

- գնահատող հանձնաժողովների նախագահ և քարտուղար էին հանդիսանում հենց նույն «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Դ. Մակիչյանը և քարտուղար՝ Հ. Ղազարյանը:

Սույն թվականի դեկտեմբերի 08-ին ժամը 17:28 –ին գնահատող հանձնաժողովն անտեսելով ու արհամարհելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի ներկայացված փաստարկներն ու տրված ավելի քան հիմնավորված տեխնիկական առումով մանրամասն մասնագիտական բացատրությունները, գնահատող հանձնաժողովի քարտուղար Հ. Ղազարյանի hayk_khazaryan@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առ 08.12.2017 թ. №7 արձանագրությունն, որի թիվ 1 որոշման մեջ փաստորեն կատարելով պաշտոնական կեղծիք առանց որևէ բացատրության նշվել է, թե «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի «... կողմից սահմանված ժամկետում շտկված տարբերակը չի ներկայացվել», իսկ թիվ 2 որոշմամբ էլ մերժվել է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով 16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 37-րդ հոդվածի՝ 1-ին մասի 1-ին կետը:

«181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն անհիմն մեղադրանք է ներկայացրել «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի և 48-րդ կետի 1-ին ենթակետի

խախտման մեջ, մինչդեռ, հրավերի N 6 և N 6.1 հավելվածների՝ ներկայացված լինելու փաստը հաստատվում է սույն բողոքին կցված փաստաթղթերի պատճեններով:

Ընկերության համար անհասկանալի է, թե ինչո՞ւ ընթացակարգի հանձնաժողովը չի անդրադարձել խնդրի մանրամասն ուսումնասիրությանն և շուտափույթ որոշում է կայացրել, այն դեպքում, երբ համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի, այն է՝«... գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը...», սակայն վերջինս այս դեպքում նույնիսկ չի փորձել որևիցե նման քայլ ձեռնարկել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ 1-ին մասը, սահմանում է, որ «... Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը...»:

Ընկերությունը գտնում է, որ անհրաժեշտ թվարկել նույն օրենքի նաև 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն, այն են՝ «...գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա. 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում. 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում. 3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն...»:

Ելնելով վերը նշված բոլոր փաստերից Ընկերությունը գտնում է, որ հրավերը պատրաստելիս և գնանշումն անցկացնելիս գնահատող հանձնաժողովը կոպիտ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը, 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը:

Վերը նշվածից, ըստ Ընկերության, միանշանակ և ակնհայտ երևում է, որ խախտվել են նաև ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, 48-րդ կետի 1-ին ենթակետը, 66-րդ և 67-րդ կետերը:

Ընկերությունը բողոքով խնդրել է «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ից հրավերի 6.1 հավելվածի շտկված տարբերակը պահանջելու մասին որոշումը, ինչպես նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2017թ. թիվ 7 արձանագրությամբ կայացված թիվ 1 և թիվ 2 որոշումները ճանաչել անվավեր:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը Խորհրդին ուղղված 13.12.2017թ. գրությամբ հայտնել է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքների նկարագրում արձանագրված անհամապատասխանություններից հետո Ընկերությանն առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք, որից հետո սահմանված ժամկետներում Ընկերության կողմից անհամապատասխանությունները չեն շտկվել:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն մինչև հրավերով սահմանված ժամկետի ավարտը չի ներկայացրել որևէ առաջարկ կամ պարզաբանման պահանջ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի ոչ հստակ և ոչ ամբողջական կազմված լինելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ Պատվիրատուն հայտնել է, որ հանձնաժողովի կողմից կայացված ոչ մի որոշում չի հակասում գնումների մասին ՀՀ օրենսդրությանը և հանձնաժողովի գործողությունները չեն հանգեցրել որևէ մասնակցի իրավունքների խախտմանը, չեն եղել խտրական և չեն սահմանափակել մրցակցությունը:

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը վերոհիշյալ գրությամբ ներկայացրել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.12.2017թ. ժամը 10:30-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերը նշված դիրքորոշումը:

3. ԳԲԽ-ԱՄ-2017/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2017/48 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է գնման առարկա էլեկտրոնային գրատախտակի հետևյալ բնութագիրը.

	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը
1	**Էլեկտրոնային գրատախտակ՝** Ակտիվ մակերեսի չափերը ոչ պակաս 77", հնարավորություն առնվազն 3 օգտագործողների միաժամանակյա աշխատանքի համար՝ ձեռքի հպման եղանակով (touch): Համակարգը ներառում է՝ -էլեկտրոնային գրատախտակ (առանձին՝ այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ) - 1 հատ: -Պրոյեկտորի կախիչ (առաստաղին և պատին ամրացնելու, հնարավորությամբ) - 1 հատ: -Պրոյեկտոր (ոչ պակաս 3200 լյումենս), որը հնարավոր կլինի օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս (օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար): - 1 հատ:	հավաքածու

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.12.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին ուղղված 06.12.2017թ. ծանուցմամբ, հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրի մեջ արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես.

«Հրավերով պահանջվել է էլեկտրոնային գրատախտակ, որը բաղկացած է երեք բաղադրիչներից.

1) Էլեկտրոնային գրատախտակ (առանձին՝ այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ)- 1 հատ.

2) Պրոյեկտորի կախիչ (առաստաղին և պատին ամրացնելու հնարավորությամբ)- 1 հատ.

3) Պրոյեկտոր (ոչ պակաս 3200 լյումենս), որը հնարավոր կլինի օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս (օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար)- 1 հատ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նկարագիրը բաղկացած է 3 կետից.

ա) Թվային պրոյեկտոր NEC UM351Wi/ Digital Projector NEC UM351Wi- 1 հատ (կախիչը ներառված).

բ) Գրատախտակ- 1 հատ.

գ) Ուսուցման ինտերակտիվ համակարգի տեղադրման համար անհրաժեշտ մալուխներ՝ Equip USB 2.0 ակտիվ երկարացման մալուխ 5մ – 1 հատ, Equip HDMI միացման մալուխ M./M., 10մ – 1 հատ:

Հրավերով պահանջվող կախիչի մասով տվյալներ առկա չեն և նշված չէ՝ այդ կախիչը նախատեսված է առաստաղին և պատին ամրացնելու համար, թե ոչ:

Հրավերով պահանջվել է էլեկտրոնային գրատախտակ, այլ ոչ թե գրատախտակ:

Ինչպես նաև խնդրում եմ նշել, թե արդյոք հնարավոր է պրոյեկտորը օգտագործել համակարգից դուրս, օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար, թե ոչ»:

Վերոհիշյալով պայմանավորված «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին առաջարկվել է վերը նշված ծանուցումը ստանալու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը չի ներկայացվել:

4. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի 11.12.2017թ. բողոքը, «Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 13.12.2017թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխա-

նության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Նույն կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Երևանի հ. 181 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար էլեկտրոնային գրատախտակների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերով գնման առարկա էլեկտրոնային գրատախտակի համար նախատեսվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը (նկարագիրը).

	տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը
1	**<u>Էլեկտրոնային գրատախտակ՝</u>** Ակտիվ մակերեսի չափերը ոչ պակաս 77", հնարավորություն առնվազն 3 օգտագործողների միաժամանակյա աշխատանքի համար՝ ձեռքի հպման եղանակով (touch): Համակարգը ներառում է՝ -էլեկտրոնային գրատախտակ (առանձին՝ այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ) - 1 հատ: -Պրոյեկտորի կախիչ (առաստաղին և պատին ամրացնելու, հնարավորությամբ) - 1 հատ: -Պրոյեկտոր (ոչ պակաս 3200 լյումենս), որը հնարավոր կլինի օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս (օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար): - 1 հատ:	հավաքածու

Ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման

հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ սույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում սույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.12.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին սահմանված կարգով ծանուցվել է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչպես նաև հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընկերության կողմից հրավերի թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ նկարագիրը.

Անվանումը	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը	Տեխնիկական բնութագրերը
Էլեկտրոնային գրատախտակ (Ուսուցման ինտերակտիվ համակարգ) հավաքածու:	*NEC*	*NEC Display Solutions, LTD (Ճապոնիա)*		*Էլեկտրոնային գրատախտակ* (Ուսուցման ինտերակտիվ համակարգ) հավաքածու՝ - Ակտիվ մակերեսը *կարգավորվող՝ անկյունագիծը* (min/max)՝ 58" մինչև 110" ; - Մինչև 255 օգտագործողների միաժամանակյա աշխատանք մատով կամ ցանկացած գրչաձև առարկայով *հպման* եղանակով; - Բազմագրիչ (մինչև *255 հպազգայություն գրիչ*՝ 2 հպազգայուն գրիչ ներառված է հիմնական կոմպլեկտացիայում) ինտերակտիվություն; - Ավտոմատ տրամաչափարկում ցանկացած մակերեսի վրա; - Կրթական կազմակերպությունների համար հատուկ մշակված բազմալեզու անվճար *ծրագրային ապհովում* SMART Notebook; Յուրաքանչյուր համակարգը (հավաքածուն) ներառում է՝ Ա) Թվային պրոյեկտոր NEC UM351Wi / Digital Projector

			Չինաստան	NEC UM351Wi - 1 հատ; - Պատկերի արտացոլման հեղուկ-բյուրեղային տեխնոլոգիա՝3 x 0.63" LCD TFT Panel with Micro Lens Array (MLA); Հատուկ հնարավորություններ / Special Features : - USB Viewer *առանց համակարգչի շնորհանդես անցկացնելու համար* /USB Viewer for JPEG - allows files to be displayed directly from a USB stick.; - USB Display (incl. Audio) ֆունկցիա – համակարգչի էկրանի պատկերի ցուցադրում USB-մալուխի միջոցով առանց VGA մալուխ միացնելու / USB Display – computer's screen image can be projected via a USB cable without connecting a VGA cable; - Ինֆորմացիայի փոխանցում համակարգչային ցանցի միջոցով / Content Transmission via Network; - Լրացուցիչ WLAN / Optional WLAN և PJ LINK ստանդարտ; - Հեռակառավարում և հսկում ՝ LAN-ի և RS-232-ի միջոցով / Remote control and administration via LAN and RS232; - Հատուկ ծրագրային ապահովում NaViSet Administrator 2 բազմաքանակ պրոյեկտորների ղեկավարման համար համակարգչային ցանցի միջոցով/ NaViSet Administrator 2 software to manage all your connected display devices from a centralized location; - DICOM տեխնոլոգիա / DICOM Simulation -a standardized display function for gray scale images based on human sensitivity to contrast - Պատի գույնի կոմպենսացում և գույնի կառավառում (6 առանցքային գույնի կառավարում) / Wall Color Correction & Color Management (6 Axis Color Control); - Պատկերի կարգավորում / Picture Adjust, Շնորհանդես և մկնիկի հսկում /Presentation and Mouse Control; - Վիրտուալ հեռակառավարում համակարգչի անմիջական հսկման համար /Virtual Remote for direct PC control - the various projector settings can be managed not only using the remote control unit, but also from a PC connected to it via the VGA cable.; - Ավտոմատ էկոնոմ ռեժիմի միացում / Auto Eco Mode - energy-saving option enables the projector brightness to be lowered in order to prolong the service life of the lamp and to cut power consumption; - Ավտոմատ միացում և անջատում / Auto Power ON/OFF, Արագ միացում / արագ անջատում / Quick On/Off; Direct Power-Off Function & Off-Timer , ECO scheduler; - 75% էկրանի մթացում և խոշորացման հնարավորություն / 75 % AV mute function & Magnify function; - Բարձր լեռնային գոտում աշխատելու ռեժիմ / High Altitude Mode; - Օգտվողի լոգոտիպի օպցիոնալ արտացոլում /Optional User Logo and Test Pattern;

				- Բազմալեզու (29 լեզու) և գաղտնաբառով անվտանգության համակարգ մենյու / OSD with 29 languages & Password Security System; - 255 միաժամանակյա հպում մատով կամ ցանկացած գրչաձև առարկայով և ավտոմատ տրամաչափարկում / 255 Simultaneous Touches by finger , gloved hand, etc. and auto-calibration; - Բազմագրիչ (մինչև 255 հպազգայություն գրիչ) ինտերակտիվություն , ավտոմատ կարգավորվող , *ցանկացած մակերեսի վրա* / Multi-pen interactivity with auto-calibration on any kind of surface; - Երկու *էլեկտրոնային* գրիչներ միաժամանակյա ինտերակտիվությամբ *ներառված էն հիմնական կոմպլեկտացիայում* / Dual Electronic Pens with simultaneous interactivity are included in standard package; - Պայծառությունը՝ / Brightness - 3,500 Lumens (approx. 75% in Normal, 60% in Eco Mode); - Կետայնությունը՝ իսկական (ֆիզիկական)՝Native WXGA (1,280 x 800 pixels / total 1,024,000 pixels) / արհեստական (ինտերպոլացված)՝compressed WUXGA (1,920 x 1,200 pixels/ total 2,304,000 pixels)) resolution; - Կողմերի հարաբերակցության 16:10 (իսկական) /16:9, 4:3 (արհեստական)/Aspect Ratio (Native / Supported) - 16:10 / 16 :9, 4:3; - Լամպի շահագործման ժամկետը՝ 3,800 /5,000 / 8,000 ժամ (Պայծառ / Ստանդարտ / Էկոնոմ ռեժիմներում) / Lamp life - 3,800 /5,000 / 8,000 hours (High Bright/Normal / Eco mode); - Կոնտրաստը՝ / Contrast - 6,000 : 1; - Պատկերի չափը՝ / Screen size (diagonal, min/max) - 147.3cm (58") - 279.4cm (110"); - Պրոեկցիոն հեռավորություն / Projection Distance - 0.1 – 0.51 m; - Բացվածքի հարաբերակցություն / Throw Ratio - 0.36 : 1; -Մեխանիկական ֆոկուս / ֆիքսված օպտիկական խոշորացում/ Manual Focus / Fixed Optical Zoom; - Թվային խոշորացում / Digital Zoom – 1.4x; - ՈՒղղահայաց և հորիզոնական սեղանային շեղումների շտկում / Manual Keystone correction - V = ±10% / H= ±10%; - Մուտքային տերմինալներ / Input terminals: 1 x Mini D-sub 15 pin (VGA - Component shared); 1 x HDMI (Deep Color, Lip sync); 1 x HDMI with MHL support; Composite:1 x RCA; 1 x 3.5 mm Stereo Mini Jack; 2 x RCA Stereo; Microphone Input: 1 x 3.5 mm Stereo Mini Jack (Dynamic mic); - Ելքային տերմինալներ՝ / Output terminals: 1 x Mini D-sub 15 pin; 1 x 3.5 mm Stereo Mini Jack (variable); - Հաղորդակցման տերմինալներ՝ / Communication terminals: 2 x Type A (USB 2.0 high speed); 1 x USB Type

				B; 1 x RS – 232; 1x RJ-45; WLAN (optional) - Բարձրախոս / Speakers - 1 x 20W (mono); - Պատի կախոցը ներառված է / Wall Mount included; - Երաշխիք / Warranty: - Թվային պրոյեկտորի համար՝ 36 (երեսունվեց) ամիս. - Հատուկ կրթական երաշխիք ներկառուցված լամպի համար՝ 3 տարի կամ 3,000 ժամ: Հասանելի է միայն կրթոջախների համար:
	Արտադրողը սահմանված կարգով (29.04.2010թ. «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքով) ապրանքային նշանի գրանցման համար չի դիմել պետական լիազոր մարմին	*«ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ» ԱՁ*	*Հայաստանի Հանրապետություն*	Բ) Գրատախտակ (Ակտիվ մակերեսը՝ 100" անկյունագիծ, սպիտակ, անփայլ, ջրադիմացկուն, լվացվող - 1 հատ; - Երաշխիք / Warranty: 3 տարի
	Equip	DDC GmbH (Գերմանիա)	Չինաստան	Գ) Ուսուցման ինտերակտիվ համակարգի տեղադրման համար անհրաժեշտ մալուխներ՝ Equip USB 2.0 ակտիվ երկարացման մալուխ 5մ - 1 հատ, Equip HDMI միացման մալուխ M./M., 10մ - 1 հատ: - Երաշխիք / Warranty: 3 տարի

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2017թ. թիվ 7 արձանագրության մեջ նշվել է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում արձանագրվել են անհամապատասխանություններ: Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը սահմանված կարգով ծանուցել

է «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Ի պատասխան վերոհիշյալ ծանուցմանը՝ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 07.12.2017թ. ներկայացրել է նամակ-պարզաբանում, որտեղ հիմնավորել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում ներառված է նաև պատի կախիչը, որը սակայն գնահատող հանձնաժողովի կողմից հաշվի չի առնվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2017թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 7 արձանագրությամբ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը չի ներկայացվել:

Այսպես, Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով որպես գնման առարկա նախատեսվել է էլեկտրոնային գրատախտակ ապրանքատեսակը, որը, համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի իրենից ներկայացնում է հավաքածու, որի մեջ ներառված է էլեկտրոնային գրատախտակ (առանձին՝ այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ), պրոյեկտորի կախիչ (առաստաղին և պատին ամրացնելու հնարավորությամբ), պրոյեկտոր (ոչ պակաս 3200 լյումենս), որը հնարավոր կլինի օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս (օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար):

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին ուղղված 06.12.2017թ. անհամապատասխանությունը շտկելու ծանուցման մեջ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից որպես անհամապատասխանություն նշվել է, որ հրավերով պահանջվել է էլեկտրոնային գրատախտակ, որը բաղկացած է երեք բաղադրիչներից.

1) Էլեկտրոնային գրատախտակ (առանձին՝ այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ)- 1 հատ.

2) Պրոյեկտորի կախիչ (առաստաղին և պատին ամրացնելու հնարավորությամբ)- 1 հատ.

3) Պրոյեկտոր (ոչ պակաս 3200 լումենս), որը հնարավոր կլինի օգտագործել նաև առանձին՝ համակարգից դուրս (օրինակ՝ դահլիճում անցկացվող միջոցառումների ժամանակ դասընթացների անցկացման ընթացքում ցուցադրություններ կազմակերպելու կամ այլ նմանատիպ ծրագրեր իրականացնելու համար)- 1 հատ:

Իսկ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նկարագիրը բաղկացած է 3 կետից.

ա) Թվային պրոյեկտոր NEC UM351Wi/ Digital Projector NEC UM351Wi- 1 հատ (կախիչը ներառված).

բ) Գրատախտակ- 1 հատ.

գ) Ուսուցման ինտերակտիվ համակարգի տեղադրման համար անհրաժեշտ մալուխներ՝ Equip USB 2.0 ակտիվ երկարացման մալուխ 5 մ – 1 հատ, Equip HDMI միացման մալուխ M./M., 10մ – 1 հատ:

Ընդ որում՝ հրավերով պահանջվել է էլեկտրոնային գրատախտակ, այլ ոչ թե գրատախտակ:

Այս տեսանկյունից Խորհուրդն անհրաժեշտ է գտնում նշել, որ համացանցի մի շարք կայքերում առկա տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ էլեկտրոնային կամ այսպես կոչված ինտերակտիվ գրատախտակը իրենից ներկայացնում է հավաքածու, որը բաղկացած է մի շարք ինքնուրույն բաղադրիչներից, որոնց համակցությամբ գործարկվում է համապատասխան համակարգը:

Էլեկտրոնային գրատախտակի առավել տարածված հավաքածուի մեջ ներառվում է գրատախտակ, պրոյեկտոր և կախիչ, իսկ որոշ դեպքերում նաև՝ համակարգիչ: Տվյալ դեպքում գրատախտակը հանդես է գալիս որպես համակարգի բաղկացուցիչ մաս, որի մեջ ներառված են նաև վերը նշված բաղադրիչները: Նշված համակարգը հավաքական առումով կոչվում է էլեկտրոնային գրատախտակ:

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվել է էլեկտրոնային գրատախտակ, որի հավաքածուի մեջ ներառվել է թվային պրոյեկտոր (3500 լումենս), պրոյեկտորի պատի կախիչ, գրատախտակ, ուսուցման ինտերակտիվ համակարգի տեղադրման համար անհրաժեշտ մալուխներ:

Հրավերի տեխնիկական բնութագրով նշվել է, որ էլեկտրոնային գրատախտակը պետք օժտված լինի առանձին այլ պրոյեկտորի հետ օգտագործելու հնարավորությամբ: «Ֆիրմա

Ալֆա» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 07.12.2017թ. գրությամբ հայտնել է, որ ցանկացած թվային պրոյեկտոր կարող է օգտագործվել նշված գրատախտակի հետ համակցված համակարգում աշխատելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի մեջ էլեկտրոնային գրատախտակի համակարգի մեջ ներառված գրատախտակի հատուկ և հստակ տեխնիկական հատկանիշներ չեն սահմանվել, ուստի Խորհուրդն գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավաքածուի մեջ մտնող գրատախտակը, ինչպես նաև թվային պրոյեկտորը, որը նույնպես համաձայն համացանցում առկա տեխնիկական բնութագրման, իրենից ներկայացնում է առանձին սարք և կարող է աշխատել նշված էլեկտրոնային գրատախտակի համակարգից դուրս, նախատեսված պարամետրերի շրջանակներում համապատասխանում են հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով հիմնավոր է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ին ուղղված ծանուցման մեջ որպես արձանագրված անհամապատասխանություն, նշել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում հրավերով պահանջվող կախիչի մասով տվյալներ առկա չեն և նշված չէ՝ այդ կախիչը նախատեսված է առաստաղին և պատին ամրացնելու համար, թե ոչ:

Խորհուրդն արձանագրում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված հավելված 6.1 առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ նշվել է, որ կախիչը ներառված է: Միևնույն ժամանակ Խորհուրդն արձանագրում է, նաև, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային գրատախտակի հավաքածուի մեջ մտնող կախիչը ***նախատեսված է միայն պատին ամրացնելու համար:*** Մինչդեռ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ հավաքածուի մեջ մտնող պրոյեկտորի ***կախիչը պետք է օժտված լինի առաստաղին և պատին ամրացնելու հնարավորությամբ:***

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ն բողոքի մեջ նշել է, որ հրավերով նախատեսված երկու կախոցները լրիվ տարբեր կոնստրուկտիվ լուծումներ են պահանջում և տնտեսական տեսանկյունից համատեղել այդ երկու տարբեր լուծումները մի սարքավորման մեջ՝

անկասկած աննպատակահարմար է: Բացի այդ, որևիցե լուրջ կազմակերպություն չի արտադրում պրոյեկտորի կախոց նախատեսված միաժամանակ և առաստաղին և պատին ամրացնելու համար:

Խորհուրդն արձանագրում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ըստ էության վիճարկվում են հրավերի տեխնիկական բնութագրի պահանջները:

Այս տեսանկյունից Խորհուրդն անհրաժեշտ է գտնում նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է, որ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է ***գնման առարկայի բնութագրերը,*** նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ***ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:*** Մինչդեռ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման նիստն արդեն իսկ տեղի է ունեցել, ուստի Ընկերության կողմից այլևս չեն կարող վիճարկվել Ընթացակարգի հրավերի պահանջները:

Տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսվել է, որ պրոյեկտորի կախիչը պետք է ունենա պատին և առաստաղին ամրացնելու հնարավորություն: Ընկերության կողմից ներկայացված կախիչը նախատեսված է միայն պատին ամրացնելու համար:

Հրավերի ՄԱՍ Ի-ի 8-րդ կետի 8.19-րդ ենթակետի 2-րդ պարբերության համաձայն՝ հրավերի 1-ին մասի 8.16 կետով նախատեսված փաստաթղթերը գնահատելու նպատակով հրավիրվող նիստում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն ապրանքի ամբողջական նկարագրում սույն հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով շտկված և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կրկին ներկայացված տեխնիկական բնութագիրը ***պրոյեկտորի կախիչի՝ պատին և առաստաղին ամրացնելու հնարավորությամբ օժտված լինելու պահանջի մասով չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրին (հրավերի պահանջներին),*** մինչդեռ Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «181ԴՊ-ԳՀԱՊՁԲ-17/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին, ուստի Խորհուրդը գտնում է, որ «Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի բողոքը սույն մասով անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ֆիրմա Ալֆա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 11.12.2017թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**